ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ
Համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային
ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

1. Համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության 2-րդ կարգի մասնագետի /ծածկագիր 3.3-1/

2-րդ կարգի մասնագետը՝
-Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ սահմանված կարգով իրականացնում է ծառայողական բնույթի նյութերի համակարգչային կազմման աշխատանքներ, պատասխանատվություն է կրում գյուղապետարանից ելքագրվող համակարգչով տպագրված ծառայողական գաղտնիք պարունակող փաստաթղթերի գաղտնիության պահպանման համար
-Ապահովում է գույքահարկի տեղեկատվական տվյալների շտեմարանի հետ կապված աշխատանքները.
-Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է Աշխատակազմի առջև դրված իր գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկություններ, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է.

-միջնակարգ կրթություն, սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:
Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2014 թվականի մայիսի 26-ին ժամը 12^{00}–ին Բամբակաշատի գյուղապետարանում:
Դիմող ՀՀ քաղաքացիները աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.
-դիմում մրցույթային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում փաստաթղթերը ներկայացնելիս/
- տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար դիմողի մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի դիպլոմ/ների/, աշխատանքային գրքույկի/ բացակայության դեպքում տեղեկանք համապատասխան վայրի/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին
-արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
-մեկ լուսանկար 2x4 սմ չափի
-անձնագրի պատճենը
-Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 3-ի թիվ 310 –Ն որոշմամբ հաստատված հիվանդությունների բացակայության մասին հայտարարություն:
Փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով : Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը –ից մինչև 16- ը Բամբակաշատի գյուղապետարանում, և ՀՀ Արմավիրի մարզպետարան բացի շաբաթ և կիրակի օրերից:
Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2014 թվականի մայիսի 12-ը:
Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատի գյուղապետարան /հեռ. 093384344/:ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳԱՏԾ վարչություն՝ հասցե՝ ք. Արմավիր, Աբովյան 71, հեռ.0237 2-07-70/